իրադարձություններ[33], սակայն դրանք, մինչև «Գիրք պատմութեանց»-ում ներառվելը, հասցրել են բանավոր պատմվել և ձեռք են բերել գրական, այս պարագային՝ վկայաբանական հատկանություններ: Ինչպես թելադրում է վկայաբանության կաղապարը՝ հերոսուհուց պահանջում են ուրանալ քրիստոնեությունն ու մահմեդական հավատին դառնալ, ինչը, բնականաբար, մերժվում է: Հերոսուհու մերժողական պատասխանը ևս տեքստային առումով կանոնիկ-վկայաբանական է. «Եթէ զիս անգամ յօշեն, ես ոչ թուլանամ ի սիրոյն Քրիստոսի և ոչ դառնամ ի նորին հաւատոցն» (էջ 145): Սրան, կրկին նույն կաղապարային թելադրանքով, հաջորդում են անմարդկային տանջանքները, բայց հերոսուհին մնում է անդրդվելի ու նահատակվում է:

Ինչպես արդեն նշվել է, «Գիրք պատմութեանցի» հյուսվածքում իբրև գլուխ տեղադրությունից բացի, որոշ վկայաբանություններ դրսևորվում են նաև այլ բովանդակությամբ ու ժանրային նկարագրով գլուխների համատեքստում: Այդպիսի դեպքերում վկայաբանությունն իբրև ժանր որոշակի տարտղնումներ ու վերածևություններ է արձանագրում: Նույնիսկ կարելի է ասել, որ այդ դրսևորումներում պարզապես պահպանվում է տվյալ ժանրի մասին հիշողությունը: Գրիգոր անունով քրիստոնյայի մասին պատմությունն, օրինակ, որն ընդգրկված է «Միւս պատմութիւն նեղութեանց, զոր կրեցին ազգն Հայոց յառաջնոյ Շահաբաս թագաւորէն» վերնագրով ԺԴ գլխում, զրուցատիպ է, բայց նրանում գերակշիռ տեղ են զբաղեցնում նաև վկայաբանական տարրերը: Սա հետաքրքիր նմուշ է այն առումով, որ ցուցանում է ժանրի անհետացման կամ վերածևման ընթացքի նրբությունները: «Այր ոմն քրիստոնեայ՝ անունն Գրիգոր» սկսվածքն արդեն վկայաբանական է, և վերևում

---

[33] Դրանք հաստատվում են նաև վրացական տարբեր աղբյուրներով, թեպետ տարբերություններ, շեղումներ, տարընկալումներ, անշուշտ, առկա են: Այդ մասին մանրամասն տե՛ս ***Առաքել Դաւրիժեցի,*** Գիրք պատմութեանց, էջ 510–511, համար 57–62 ծանոթագրությունները: